

Աղուեսագիրք» կոչուած առականքու հաւա-
ւածքածոն, և ուրիշ գրքերու հետ նաեւ Ա-
ռաբել Դաւրիթեցիի պատմութիւնը, որուն
շարագրութիւնը սկսուած էր Փիլիպպոս
Կաթողիկոսի օրով և աւարտած՝ Յակոբ
Ջուղայեցիի քաջալերութեամբ: Դաւրի-
թեցիի պատմութիւնը կ'ընդգրկէ 1602—
1662ի շրջանի գէպքերը (10):

Ամսդերտամի մէջ Ոսկանի գլխաւոր
գործը կ'ըլլայ Աստուածաշունչի տպագրու-
թիւնը, որուն համար մասնաւորապէս գինք
Եւրոպա դրկած էր Յակոբ Կաթողիկոս(11):
Այս կարեւոր ձեռնարկը կը սկսի 1666ին և
կ'աւարտի 1668ին: Հայերէն Աստուածա-
շունչի առաջին տպագրութիւնն է այս:
Հրատարակութեան մէջ, Ոսկան՝ լատինա-
կանին համաձայն, գրքերը գլուխներու և
գլուխները համարներու բաժնած է. «Հրա-
մանաւ Վեհափառին Տեառն Յակոբայ Հա-
յոց Կաթողիկոսի՝ գլխակարգեալ եւ սնացեալ
է ըստ դաղմասականացն» (12):

Ոսկան Վարդապետ պահ մը կը խորհի
իր տպարանը Լեհաստանի Լէոպոլիս քա-
ղաքը փոխադրել (1665), որովհետեւ կը

(10) Լեո, Անդ, 451—452. Չամչեան Գ.
660—661. Առաբել Դաւրիթեցի, Անդ, 517,
Արարատ, Անդ, 774:

(11) Լեո, Անդ, 449:

(12) Լեո, Անդ, 448. Ազգայ. Բ. 2640
—2541. Չամչեան Գ. 660: